

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՐԿԵՏԻՆԻ ՏԱՐԻ

ՄԱՐԿԵՏԻՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлиς, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջօրեայ).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆոն № 253.

ՀԱՄԱՐԱՅԻՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Կիրակի, մարտի 22-ին

Կուկիայի ս. Պօղոս-Պետրոս եկեղեցում տեղի կունենայ

ՔՐԻՍՏԱՓՈՐ ԿԱՐԱ-ՄՈՒՐԱՋԱՅԻ

հոգեհանգիստը նրա մահվան տարեկիցի առիթով. Հոգեհանգիստը կը սկսվի ճիշտ ժամի
12 1/2-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընթացք են ստանում.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՆԸ. Մամուլ. Իսկապատար Սիւրիսկու
կոնցերտը. Յամակ Ախալաբադի. Նամակ
Սիմֆոնիայի. Նամակ իմպրովիզացիան. Ներ-
քին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀԵՒԱ-
ԳԻՐՈՒՆԸ. —ՇԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԱՆԱ-
ՍԻՐԱՆԱՆ. Պատկերներ Բաֆֆի կեանքից:

ԸՆԹԱՑՔ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ

Կովկասին վերաբերող մի քանի հար-
ցեր ընկալվեան պէտք է ներթափանցեն այն
խորհրդում, որ հրաւիրված է Պետերբուր-
գում երկրագործութեան միաստութեան
մէջ: Այդ հարցերը վերաբերում են Կով-
կասեան լեռնային տնտեսութեան եւ կաթ-
նառնտնտեսութեան: Խորհրդի օրակարգի
մէջ մտցրած են իբրեւ առաջարկութիւն-
ներ հետեւեալ կէտերը. 1) Հիմնել Կով-
կասում շէնքարային պանիր պատրաստե-
լու համար դպրոց, 2) Հիմնել լալիական
(լեռնային) կայարան՝ մշտական փորձեր
անելու կաթնատնտեսութեան եւ տաւարա-
պահութեան ասպարէզներում, 3) կատա-
րելագործել Կովկասում պատրաստվող ոչ-
կարի պանիր տեսակները տեղական գոր-
ծածութեան համար. 4) մտցնել ոչկարի
պանիրների եւրոպական տեսակների պա-
տրաստութիւնը եւ 5) ուսումնասիրել Թիւր-
քիայի, Եգիպտոսի, մասամբ Յունաստանի,
Իտալիայի եւ Սպանիայի վաճառանոցները,
որոշելու համար ոչկարի պանիրների վա-
ճառահանման պայմանները: Բացի այդ
հարցերից, որոնք յատկապէս Կովկասին են
վերաբերում, խորհուրդը պէտք է քննէ եւ
ընդհանուր խնդիրներ, որոնք նշանակու-
թիւն ունեն և Կովկասի համար:

Պէտք է նկատել, որ մեր առաջ բերած

խնդիրները մի քանի անգամ քննվել են
Կովկասեան գիւղատնտեսական ընկերու-
թեան մէջ և պատճառաբանվել հիմնաւոր
ապացոյցներով: Նրանք հասկնում էին են
գտել նաեւ երեք համապատասխան ժողովու-
րում, որոնք կայացել են 1896 թուին Թիֆ-
լիսում, 1899 թուին Պետերբուրգում և
1901 թուին դարձեալ Թիֆլիսում:

Մեր ընթերցողներին յայտնի է, որ Կով-
կասում աճող մօտ քառասուն տարի է,
ինչ սկսվել է պատրաստվել շէնքարային
պանիր, որի քանակութիւնը այժմ հաս-
նում է մօտ 30,000 պունդի. նոյնպէս
յայտնի է, որ Կովկասում կատարելագործ-
վել է իւղագործութիւնը և պատրաստ-
վում են նոր տեսակի ուրիշ արդիւնքներ:
Սակայն այդ բոլոր կատարելագործութիւն-
ները կատարվել են կամ մասնաւոր անձերի
կամ Կովկասեան գիւղատնտեսական ընկե-
րութեան շնորհիւ, իսկ երկրագործութեան
միաստութիւնը մինչև այժմ դեռ ներք-
գործական դեր չէ կատարել և միայն այժմ
է հարց զննում կառավարչական օգնու-
թեան մասին Կովկասի գիւղատնտեսու-
թեան այդ ճիւղի համար:

Ցանկալի է, որ այժմ, երբ միաստու-
թեան մէջ այդ հարցը հերթական է դար-
ձել, զոնէ այժմ նա ալ ևս չը լեռնաձգվի
և ստանա անմիջական իրաւործութիւն:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Ջարմանայի բանին են պատահում մեր աշ-
խարհում, երբեմն անբաժան զարմանալի, որ
նոյն-իսկ անհաւատալի են թւում Այս գիտնե-
րը: Մի ամբողջ քաղաքային մի կողմը տալե-
լով, նրա հարթած երեսում, յայտնի չէ թէ
նր գործում, խիստ վարպետութեամբ քանդա-
կել են մի քանի բաւական խոշոր ձիւղեր:

Մենք ճանապարհից մի քիչ չեղվելով և դէպի
վեր բարձրանալով, հեռուից նկատեցինք քան-
դակը. բայց սկզբում նրա վրա երևում էին
միայն հօրիզոնական հաստ ծղեր, իսկ երբ
մենք աւելի մօտեցանք՝ պատկերը պարզ երե-
ւացաւ: Մի ամբողջ քաղաքային մի կողմը տալե-
լով, նրա հարթած երեսում, յայտնի չէ թէ
նր գործում, խիստ վարպետութեամբ քանդա-
կել են մի քանի բաւական խոշոր ձիւղեր:

նեին գոյութիւն չը պիտի ունենային, հող չը
պիտի գտնէին: Եթէ, օրինակ, գաւառի մի յետ
ընկած անկիւնում, ինչպէս ուսանողն են ասում
մի որեւէ «արթի անկիւնում» տեղի են ունենում
գործեր, որոնք զարմանք և ապշուածիւն են
պատճառում, այդ դեռ հասկանալի է. չէ որ
«եթէ» սարի, «եթէ» թփի ետեւում կորած է
այդ անկիւնը, ինչպէս պատկերացնում է հե-
ռաւորութիւնը մեր ժողովրդական հէքիւթի
մէջ: Իսկուհում ենք զարմանալի բանը, բայց
ասում ենք որ կարող է լինել. հեռու աշխարհ,
մարդկանցից և Աստուծուց մոռացված մի ան-
կիւն. ինչ ասես որ չը լինի անտեղի Բայց
անա թիֆլիսը.—մի անգամ քաղաք, ուր ամեն
բարեկարգութեան մասին շատ ու շատ մտա-
ծողներ կան, ուր հսկող աչքերի պակասութիւն
չը կայ, Ինչ կասե՞ք, եթէ այստեղ էլ, կովկա-
սեան այս մայրաքաղաքում, օրը կէսօրով տե-
ղի են ունենում գործեր ու դէպքեր, որոնց
չէք կարող առասպելների դասում չը դնել:
Ահա այսպիսի մի դէպք է պատմում պ. Ս.
Տերեհանին «Взъ» լրագրի մէջ: Թիֆլիսում
գոյութիւն ունի Վէրայի հայոց գերեզմանա-
տունը, ուր այժմ էլ մեռելներ են թաղվում:
Մեռելներին յատկացրած այդ գերեզմանի վրա կայ
հայոց եկեղեցի, կան գերեզմանապահներ: Բայց
կայ և այդ հողի հարևանը, որ Վէրայի թաղի
նախկին արքայաւ Սվիթսօնէ է և իսկ պարոնը
գնել է մի կտոր գետին այդ գերեզմանատան
կողքին: Ուրիշ հարևաններ էլ ունի մեռելների
յաւերտնական օթեանը. բայց միայն պ. Սվիթս-
օնէ է, որ կարծում է թէ մեռելների հողը
կարող է կենդանի մարդկանց բարօրութեան
ծառայել: Եւ մեծ եռանդով աշխատում է, որ
Վէրայի գերեզմանատան մասերը իր անշարժ
կալուածքը դառնան: Ահա ինչպէս է նկարա-
գրում պ. Ս. Տերեհանին այդ քաղաքագործ-
ութիւնները:

Պէտք է նկատել որ Վէրայի գերեզմանա-
տունը երկու մասի է բաժանվում. վաղեմա-
խելի» անունով խոր ձորով, որ 5—8 ասօէն
խորութիւն ունի: Սվիթսօնով ձորի յատա-
կում կառուցել է աղիւսի գործարաններ և
փորում է հողը ոչ թէ դէպի խորքը, այլ
ձորի յատակին հօրիզոնական ուղղու-
թեամբ: Այսպիսով փորել է ձորի կողքը
ներքից, և ձորի խորքը սկսեցին թափ-
վել վերեւում գտնվող գերեզմանները: Եւ
այսինքն Սվիթսօնովի այս գերեզմանափո-
րական գործողութիւնների տեղը, և պիտի
խոստովանեմ, որ ինձ շատ քիչ է մի բան
այնքան վրդովել, ինչպէս այդ հեղինակը թէ
օրէնքի վրա և թէ այն դանադան յանձնա-
ժողովների վրա, որոնք գնել են գերեզմա-
նատունը, չը խօսելով այլ ևս վրդովեցուցիչ:

ցնող քանդակը, որին ժամանակի կործանիչ ժա-
նիքները չեն կարողացել խորտակել՝ մարդուն
մի առանձին պատկառանք է ազդում: Բայց
ափսոս, որ մենք մի քաղաքական ակնարկ տա-
լով բաւականացանք, որովհետեւ մեր կարա-
ւանը չափ էր հեռացել միջանից, մենք հազիւ
թէ մի քաղաքական ժամից կարողացանք հաս-
նել նրան:

Սալմաստի և Ուրմիի միջավայրում գտնվող
ճանապարհները բաւականին վտանգաւոր են
ջրգրերի շարունակ կողոպտութեան և յարձակ-
մունքների պատճառով: Մեր ճանապարհի ըն-
կեր խարբերեցին կարաւանի առջևից էլ: Գնում
շարականներ երգելով: Նա գրեթէ անգործ
տէր ամբողջ ժամագիրքը և բոլոր շարական-
ները: Նրա անունը Միքայիլ Երան աղա էր (գուցէ Մի-
քայիլ), նա ինչ-որ առանձին յանձնարարութիւն-
ներով եկել էր Սալմաստ և վերադառնում էր
վանա Նա լաւ սպասադիւնակ էր, կրելով իր
վրա ատրճանակներ, հրացան և մի արծաթա-
պատ սուր, որի երախակալից կախված ոսկե-
հուռ փունջը ցոյց էր տալիս, որ նա կառա-
վարական պաշտօնեայ պէտք է լինէր: Միքայի
աղան երբեմն կարաւանից քիչ հեռանալով իր
ձին խաղաղացնում և զանազան հմուտ ձիարշա-
ներ էր անում, ապա գալիս կանգնում էր մեր
կարաւանապետի առաջ, որ մի քանի պարսիկ
էր, նոյնպէս լաւ զինված, և նրան հրահանգներ
էր տալիս:

սրբապաշտութեան մասին Կամիլաների կողմ-
ները թափված են այստեղ, ձորի յատակում,
դեռ չը փառք դադարների տախտակների
հետ. գերեզմանի քարերը այս ու այն կողմ
են ցրված. դադարների մետաղական մասերը
(կոթերը, ոտները, դարդարանքի մնացորդ-
ները) գրաւում են ձեր ուղղորդութիւնը, իսկ
վերքից, տեսնում ես, կախված է դադարի
մի մասը, որ շուտով ցած կընկնէ... Պարսիկ
աղիւսագործները մտղում են այդ հողը, չա-
ղախում են և աղիւս են այրում, իսկ եթէ
մաղիւս միջոցին պատահում է մի գանգ-
նրան թիով դէն են չարտում:

Մեղաւորը ձորն է: Ոչ, նա էլ չէ: Ահա գե-
րեզմանատան միւս կողմից ձոր չը կայ: Ու-
րեմն այդ կողմը պէտք է պաշտպանված լինի:
Բայց պ. Սվիթսօնով գտե՞ք դրա ձախ էլ: Այդ-
տեղ նա արդէն արհեստական ձոր է չինել և
քանդում է նոյն եղանակով: Գերեզմանները
այդտեղ էլ թափվում են միմեանց ետեւից:

Այսպէս կանգնել մի քանի տարիներ էլ,
և գերեզմանատան ձախ մասից հեռու էլ չի
մնա, կը մնա միայն մի անգին ձոր, մի
վիթխարի փոս, և անա այն ժամանակ Սվի-
թսօնով բոլորովին յաղթանակ կը տանէ. չը
կան գերեզմաններ, ուրեմն հողը նրան է...

Գերեզմանատան վերակառուցում այժմ բոլոր
ուժով աշխատում է պահպանել հողը, որ
արդէն անց է կացրած մակարդակի վրա,
որ պահվում է արխիվներում, աշխատում է,
վաղում է, խնդիրներ է տալիս. իսկ Սվի-
թսօնով այդ ժամանակ չէ ննջում և ետան-
դուն կերպով պարապում է գերեզմանափո-
րութեամբ:

Ահա ձեզ պատկեր, պատկեր Թիֆլիսի
երկրի տակ փռված...

ԴԱՇԱԿԱԶԱՐ ՍԼԻՎԻՍԿՈՒ ՀԱՄԵՐԳԸ

Չորեքշաբթի, մարտի 19-ին, Թիֆլիսի Ժո-
ղովարանի դահլիճում Սլիվիսկիի տունը իր
առավել համբողջ Պարոնը մի քանի տարի
սրանից առաջ տուն է մեծ աշխատութեամբ հա-
մերգներ մեղանում: Սլիվիսկիին, իր նուրբ և
ինքնուրոյն նուազածութեամբ կարող է դառնալ
աշխարհահռչակ դաշնակաւարների շարքում,
ինչպէս Դալմէր, Հոֆման, Բեյքոնաուէր, Գրուն-
ֆելդ, Չաուէր և ուրիշները: Սլիվիսկիին հան-
դիսանում է իբրեւ աչքի ընկնող գեղարուես-
տագէտ, որ վերաբարդում է Շուպանին, Շո-
պենին և մասամբ Շուբերտին, իրանց բնորոշ
առանձնատիպութիւններով: Սլիվիսկիին տեսի-
նիկայի կողմից հասել է վերին աստիճանի
կատարելագործութեան, շատ լաւ գիտէ կա-
ռավարել պեղալը: Նրա նուագը «Etudes
symphoniques op. 18» — Շուպանի, Շոպենի

— Դուք ամենքդ, ասում էր Միքայիլ աղան,
կարաւանի ետեւից և կողքից քայլեցէք, որպէս
զի կարաւանից մի բան չը գողանան, իսկ ես
կարաւանի առջևից գնալով՝ եթէ մի որեւէ
յարձակում պատահի՝ կը դիմադրեմ զէնքի զո-
րութեամբ, ինչպէս որ պէտք է: Մանաւանդ,
աւելացրեց Միքայիլ աղան, արեւ խոնարհվում
է դէպի իր մուտքը. ճիշտ այս միջոցին է, որ
աւաղակները դուրս գալով իրանց որջերից
զիւում են յափշտակութիւններով:

Միքայիլ աղայի անվեհեր խօսքերն այնպէս
լաւ տպաւորութիւն թողին ինձ վրա, որ ես
Դաֆֆին ասացի, թէ մեր այս ընկերն ինձ թը-
ւում է, որ մի քանի մարտնչող պէտք է լինի:
Բայց չը գիտեմ ձեր կարծիքն ինչ է նրա մասին:

— Ոչ, պատասխանեց Դաֆֆին, դուք սխա-
լում եք, խաբկելով նրա խորիմ խօսքերից.
Նա այն մարդը չէ, ինչ ուզում է ցոյց տալ:
Դուք լաւ ծանօթ չէք մեր թուրքաշայի հետ.
Նրանք մի քանի դարեր շարունակ, որպէս
ստորակ ապրելով թուրքի և թուրքի հարաւած-
ների տակ՝ կորցրել են իրանց էնէրգիան և
այրական քաղաքները: Անձնապաշտպանու-
թիւնը նրանց համար միտած խօսք է. ես այդ
բոլորը անձամբ նկատեցի իմ նախորդ ճանա-
պարհորդութեան միջոցին և իբրեւ փորձ, այս
իրիկուն երբ լաւ միջանայ՝ ես մի անգամ հրա-
ցան կարճակեմ, և դուք կը տեսնեք, որ այդ
մարդը իր գլուխը կը կորցնէ:

«Nocturne op. 15, «Barcarolle g—dur... Բու-
գինյանի և շատ կտորներ, որ նա անց Ժո-
զովուրդի բուռն ծափահարութիւններէն ստիպ-
ված՝ պրոգրամայից դուրս Այդ բոլորը ապա-
ցոյց են նրա բաղձնակողմանի և շնորհալի տա-
ղանդին: Մեր կարծիքով՝ Ծօպէնի Impromptu
op. 36 չափը շատ արագ վերցրեց, մանաւանդ
միջին մասը: Միանգամայն հիացրեց Մենդել-
սոն-Լիստի հարաւորները մարշի նուագումը, որ
առաջ ընկեց հանդիսականների բուռն հաւա-
նութիւնը: Դաշկիւնը լիքն էր գեղարուեստա-
սէյ հասարակութեամբ: Ինչպէս լսում ենք,
Սիլվիանսկին 2 համերգ ևս տալու է—որից յե-
տոյ նա կուղեւորվի Բաթում, ուր նշանակված
է նրա կոնցերտը մարտի 25-ին, և յետոյ Բաքու,
ուր կոնցերտը տեղի կունենայ մարտի
29-ին:

Ա. Մամաջան

ՆԱՄԱԿ ԱՌԱՔԱՍՔԻՑ

Մարտի 14-ին

Այս տարվայ սկզբից մեր քաղաքային դպ-
րոցին կից գոյութիւն ունի մանկավարժական
մուղէյ, որից պէտք է օգտվեն ամբողջ գաւառի
ուսումնարանները: Թէև առայժմ առանձին չի-
նութիւն չէ յատկացրած այդ հիմնարկութեան
համար և դեռ կանոնաւոր չէ կազմակերպված,
բայց և այնպէս նա սկսել է իր գործունէու-
թիւնը: Բերել է տրված կատարելագործված
սխեմներ մոգական լապտեր, որը լուսաւոր-
վում է անցաւիկների գազով, և մօտ 400 պատ-
կերներ՝ կրօնական, պատմական, քնադատական,
գրական և այլ բովանդակութեամբ: Ահա երկ-
րորդ ամիսն է, որ քաղաքային դպրոցում տե-
ղի են ունենում նպատակայարմար ընթերցա-
նութիւններ, որոնց ժամանակ մոգական լապ-
տերով համապատասխան պատկերներ են ցոյց
տրվում: Հետզհետեւ պէտք է ընթերցանութիւն-
ներ տեղի ունենան նաև միւս ուսումնարան-
ներում, թէ քաղաքում և թէ գիւղերում:

Բացի դրանից՝ քաղաքային դպրոցի մանկա-
վարժական ժողովը միջնորդութիւն է յարու-
ցել, ուր հարկն է, որ թոյլատրվի իր նախա-
ձեռնութեամբ ժողովրդական ընթերցանութիւն-
ներ կազմակերպել:

Թիֆլիսի նահանգապետը դրանից առաջ ար-
դէն թոյլ էր տուել քաղաքային դպրոցի տե-
սուչ պ. Սօրոկինին կարգաւ և մոգական լապ-
տերով պատկերներ ցոյց տալ տեղական բան-
տում գտնվող բանասիրականներին: Արդէն տեղի
է ունեցել առաջին ընթերցանութիւնը. ներկա
են եղել մօտ 30 բանասիրականներ, մեծ մա-
սամբ հայեր:

Ինչպէս յայտնի է, դեռ անցեալ սեպտեմբե-
րին պատրաստ էր քաղաքային դպրոցին կից
սեյսմիքական կայարանի շինութիւնը. բայց
գործիքները դեռ չէին ստացվել: Վերջերս բո-
լոր հարկաւոր գործիքները ստացվեցին, և
Թիֆլիսի ֆիզիկական օբսերվատորիայի տեսուչ
պ. Գլաստէկ եկաւ և գործիքները սարքեց:
Սեյսմիքական գործիքները պէտք է ճշ-
տութեամբ ցոյց տան երկրաշարժի սկիզբը,
վերջը, ուղղութիւնը, ձևը և ոյժը:

Այս ձեռն աշխատի կայարան բացվել է նաև
Շամախու քաղաքային դպրոցին կից: Բացի

դրանից՝ սեյսմիքական կայարաններ կան նաև
Քոթոմում և Բաթումում:

Բացի սեյսմիքական կայարանից մեր քաղա-
քային դպրոցին կից գոյութիւն ունեն երկրորդ
կարգի, իսկ մեր գաւառի Բարալէթի ուսում-
նարանին կից՝ երրորդ կարգի օգնականութեա-
նական կայարաններ, այնպէս որ հարաւորու-
թիւն կայ դիտելու և ուսումնասիրելու գա-
ւառ ֆիզիկական տեսակէտից:

Ահա չորրորդ տարին է, որ մեր քաղաքում
մօտ 20 տարի գոյութիւն ունեցած գրադարան-
ընթերցարանը փակ է. գրքերը անհետան փչա-
նում էին: Հիմա Թիֆլիսի նահանգապետը, մեր
քաղաքապետի միջնորդութեան համաձայն, կար-
գադրել է, որ գրադարանը խնամքով պահպա-
նելու համար՝ յանձնվի քաղաքային վարչու-
թեանը, մինչև որ ներքին գործերի մինիս-
տրութիւնը վերջնականապէս կը վճռէ գրադա-
րան-ընթերցարանի հարցը—քաղաքին տալ,
ինչպէս որ նուիրել են գրադարանի իրաւաբա-
նական սեփականատէրերը—հիմնադիր անդամ-
ները և ինչպէս միջնորդում է քաղաքային վար-
չութիւնը, թէ ուսումնարանական իշխանու-
թեանը տալ, ինչպէս միջնորդում է այս վեր-
ջինը:

Տեղական հայ թատերասէները պատրաստ-
վում են Ջատիկի ներկայացում տալու: Այս
անգամ լուրջ պիտէ են ընտրել և բարեխիղճ
կերպով աշխատում են ծանկանում ենք կա-
տարեալ աշխատութիւն:

Սալլիմեան

ՆԱՄԱԿ ՄԻՓՅԵՐՈՂՈՒԹ

Մարտի 14-ին

Մարտի 12-ին հողին յանձնվեց տեղիս հա-
յոց երկսեռ դպրոցի աւագ ուսուցիչ Մանուկ
Պապիկեանը: Հանգուցեալի թաղումը չեղ
կատարվեց: Ներկայ էին եկեղեցում ժամեր-
գութեանը և ապա թաղման յուզարկաւորու-
թեանը մինչև գերեզմանատուն դպրոցի հոգա-
բարձուները, ուսուցչական խմբի, բոլոր ա-
շակերտներն ու աշակերտուհիները, կար ու
ձեռք արհեստանոցի աղջիկները և ժողովրդի
ստուար բազմութիւն: Դամբանականներ խօ-
սեցին Ղ. քահ. Յովսէփեան և ուսուցիչ Տէր-
Պետրոսեան: Ի պատիւ հանգուցեալի, դպրոցը
փակ էր այդ օրը: Հանգուցեալի դագաղի վրա
դրված էին շատ պատկերներ: Կային պատկեր
հոգաբարձութեան, ուսուցչական խմբի, աշա-
կերտների և աշակերտուհիների, նախկին աշա-
կերտների և աշակերտուհիների, հայ հասարա-
կութեան և մանաւոր անձանց կողմից:

Հանգուցեալը մօտ 40 տարի ուսուցչական
պաշտօն է վարած այլ և այլ տեղերում, ին-
քիւնան դպրոցի շրջանաւորներից է: Նա ու-
սուցչական պաշտօն է վարել Սիմֆերոպոլում,
Թեօդոսիոյում, Նոր-Նախիջևանի ա. ինչ վան-
քում և ի վերջոյ Սիմֆերոպոլում: Բարձրա-
գոյն կրթութիւն ստանալու համար գնացել է
Շվեյցարիա, ուր մի-երկու տարի լսել է դա-
սախոսութիւններ: Հանգուցեալի վերջին ծա-
ռայութիւնը եղել է Սիմֆերոպոլում, ուր նա
27 տարի անընդհատ աւագ ուսուցչի պաշտօն
էր վարում:

Կորուստը անփութարկելի է. Յանձին Մ.

Դա մեր կարաւանապետի ձայնն էր: Երեսը
սպիներով պատած, իսպառ յայնաւակված մի
քաջ պարսիկ էր նա, մի ծերացած առեւծ, որ
եղել էր բազմաթիւ կռիւներում:

—Իրեւորը, ասաց նա, մեր տեսած ոչխար-
ների հօտերից մի քանիսը գրաւելով՝ զել են
դէպի իրանց սահմանը. հովիւները չը կարողա-
նալով իրանց հօտերը պաշտպանել թողել,
փախել են. այժմ ահա տեսե՛ք, այդ քրդերից
մի քանիսն էլ մօտենում են դէպի մեզ, որով
հետև մեր կարաւանը մի իւրաքի պատահ է
նրանց համար: Գրդի հետ եթէ խնայ չը վար-
վես, նա քո գլխի տէրն է. ես չեմ թողնի, որ
նրանք մեր կարաւանին մօտենան. ով որ ձե-
զանց լաւ գինով է թող ինձ հետ գայ: Այս
ասելով՝ հրացանը ձեռքն առաւ և առաջացաւ
դէպի քրդերը, որ մի 50 քայլ հեռու էին
կանգնած և մեզ դիտում էին:

Բաճիկին, իր սպասուորը և մի այլ պարսիկ,
որոնք հրացաններ ունէին, հետեւեցին կարաւա-
նապետին: Մեր կարաւանը կանգ առաւ Ծը-
կու խմբակներ իրարու մօտենալով խօսեցի-
քով: Բաճիկին Գրդերն իսկոյն ձանաչել էին
դիմադրող պարսիկին և յայտնեցին միանգա-
մայն, որ իրանց կարաւանի հետ գործ չունեն,
միայն ուղում էին իմանալ, թէ ով է անցնում
այդ կողմից: Մեզ ոչխարներն էին հարկաւոր,
ասել էին նրանք. նրանց տէրերից վրէժ լռեծե-
լու համար, նրանց գիւղի ոչխարները մեզ սե-

Պապիկեանի տեղիս հայոց դպրոցը գրվեց իր
ժրպէս, արդիւնաւէտ և պարտաճանաչ աւագ-
ուսուցչից, իսկ բեւը իր արժանաւոր ներկայ-
ացուցից: Մատաղ սերնդի կրթութեան գոր-
ծը հանգուցեալի սիրած ու փափայած առար-
կաներից մէկն էր. չը նայելով, որ հանգուցեալը
դեռ անկողին չը մտած վաղուց ոտքի վրա հի-
ւանդ էր, սակայն և այնպէս շարունակում էր
իր պարսպ իռնքները դպրոցում և մինչև վեր-
ջը չը դադարեց դպրոց յաճախելուց, երբ ան-
տանելի ցաւը անկողին գցեց խեղճին, որից
աւանդ էլ վեր չը կացաւ:

Մանուկ Պապիկեան մեր հաղագրելու ուսու-
ցիչներից էր. նա սիրում էր իր գործը, գլխ-
վին նուիրված էր նրան: Հանգուցեալի գոր-
ծունէութիւնը չէր սահմանափակվում միմիայն
մանկավարժական առարկայում. նա այնքան
երկար ու ձիգ տարիներ ծառայել է բեմին,
թատրոնական գործի գլուխ է անցել, ներկայ-
ացումներ է կազմակերպել, Օստրովսկու և այլ
հեղինակների պիէսներ է թարգմանել տեղա-
կան բարձրագոյն, որոնք խաղացվել են ոչ մի-
այն Սիմֆերոպոլում, այլ և Դրիմի բոլոր քա-
ղաքներում, նոյն-իսկ Նոր-Նախիջևանում
(ներկայացումներին համար Նոր-Նախիջևանից
դիմում էին հանգուցեալին և խնդրում ուղար-
կել իր թարգմանած ձեռագիր պիէսները):

Հանգուցեալը ընդի դրիմից էր և ամբողջ իր
կեանքը իւրայինների մէջ անց կացրած լինելով՝
տեղական բարձրագոյն շատ լաւ էր իմանում, նը-
րան կատարելապէս իմելու էր, ուսումն և նրա
թարգմանութիւնները աշողված են համարվում:
Հանգուցեալի ծառայութիւններն անչափ են
և անգնահատելի: Հասարակութիւնը, ի նկատի
տանելով նրա երկարամեայ արդիւնաւէտ և
բեղմնաւոր ծառայութիւնը ուսուցչական և
բեմական առարկայում, որոշել էր 1901 թ-ի
փետրվարի 18-ին յօռելան կատարել, սակայն
ինչ-ինչ պատճառներով այդ յօռելանի կատա-
րումը դանդաղեց, կատար չսկսվեց, և այժմ,
ցաւ է ասել, յօռելան կատարելու փոխարէն,
հասարակութիւնը ստիպված էր թաղման հան-
դէս կատարելու:

Հանգուցեալը տեղիս հայ հասարակութեան
վրա էլ մեծ երախտիք ունի. նա բացի մատաղ
սերնդի ուսուցչին ու դաստիարակը լինելուց՝
եղել է հասարակարների կրթող թատրոնական
բեմից. նա իր չորսուհի խաղով անչափ բա-
ւակաւորութիւն է պատճառել տեղիս հայ հա-
սարակութեանը, կազմակերպելով ամեն տարի
ներկայացումներ, որոնցից բաւական խոշոր
գումարներ են գոյացել, չափել են դպրոցը և
այլ բարենպաստի հիմնարկութիւններ: Կարիք
գեղացված դէպքում հանգուցեալը չէ զլացել
օգնութեան հասնելու իր ներկայացումներով
թէ դպրոցին, թէ աղքատաց հոգաբարձութեա-
նը և թէ այլ հիմնարկութիւններին:

Մ. Պապիկեանը բաւական ձեռագիր պիէս-
ներ ունի թարգմանած. Ծանկալի էր, որ մեր
հայ հասարակութիւնը իր հաշուով ապագրել
տար այդ պիէսները, որով նախ կորստից
կազատվէին հանգուցեալի աշխատութիւնները,
միւս կողմից նրա ընտանիքը որոշ չափով կա-
պահովվէր պիէսների վաճառումից գոյանալիք
արդիւնքով:

Կ.—դի

Փականացիները Գիրդերը փոքր առ փոքր հե-
ռացան և մերոնք վերադարձան: Բաճիկին սկսեց
փնտրել Միւրան աղային. ես էլ նոր մտաբե-
րեցի, որ նա իւրաքանչեւ միջոցներով մէջտեղից
վերացել էր, բայց թէ ուր էր գնացել ես էլ չը
գիտէի: Մեր կարաւանի պարսիկներից մէկը,
նկատելով որ մենք նրան եմք փնտրում՝ ասաց,
անհ նրա ձին, որ յանձնել է ինձ պահելու, իսկ
ինքը թաքնվելով այս մօտիկ գաւառայրում՝ չո-
քել է և աղօթել է անուան Բաճիկին և ես ա-
ռաջացանք դէպի պարսիկ ցոյց տուած տեղը և
տեսանք, որ ճիշտ, Միւրան աղան նստել է խո-
տերի վրա, սուրն ու հրացանը ընկած են
գետին, իսկ ինքը բազկատարած անգիր կար-
քում է և նարեկից ճնշելով քաղցրութեամբ և
Որդի Աստուծոյ կենդանոյ աղօթքները:

—Այդ ինչ էք անում, Միւրան աղա, խօսեց
Բաճիկին. այսօր դուք ինչ էիք խօսում, դուք
խոստանում էիք, որ միայնակ դուրս կը գաք
յարձակութեանցների առաջ և հրաշքներ ցոյց կը
դնէք, բայց երբ հեռուից մի քանի քրդեր նը-
կատեցիք, այն աստիճան սարսափահար էք
եղել, որ երեսայի նման փախել թաքնվել էք.
լաւ գէշք գործածող էք, կեցցէք դուք, լաւ
անուն թողիք:

Միւրան աղան ցնցված այս խօսքերից՝ ոտքի
կանգնելով այսպէս պատասխանեց.
—Ինչից եր խօսես, աղաւոր, մի՞թէ աղօթքը
գէշքի գորութեանն պակաս է. ես եթէ աղօթքի

ՆԱՄԱԿ ԽՐԱՅԳՐՈՒԹԵԱՆ

Նոր-Բայազետ, մարտի 16-ին
«Մշակի» № 39-ի ներքին լուրերում, Նոր-
Բայազետից լոյս տեսաւ մէկ լուր, ուր պ. լրա-
տուն աղաւաղել էր արժանապատիւ Պորէն
վարդապետ Մուրադբեկեանի քարոզածը: Բայց
որովհետև պ. Մուրադբեկեան էլ հաւատ էր ըն-
ծայել այդ սուտ լուրին և միամտաբար գետնից
է իր «Շաբթէ» շաբաթի յօդուածի մէջ՝ ուստի
մենք չենք կարող չարտայայտել մեր խորին
ցաւը, որ մեր քաղաքի ու գաւառի ամեն խա-
ւերում յարգանք ու մեծարանք վայելող Պոր-
էն վարդապետի վերաբերմամբ այդպիսի զըր-
պարտութիւններ են հրատարակվում: Եւ մենք,
«Մշակի» անկեղծ համակողմանի, չենք կարող
չարտայայտել դարձեալ մեր խորին ցաւակցու-
թիւնը, որ մեր ամենքիս արտին մօտ «Մշակ»-ում
տեղ են գտնում այդպիսի լուրեր:

Մեր ներկայ գործակալ Պորէն վարդապետը
անում է այն ինչ որ պիտի գործէ ամեն մի
ինտելիգենտ մարդ:

13 ստորագրութիւն

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ ամսիս 24-ին, գա-
տաստանական պալատում նշանակված է Ախալ-
ցխայի ա. Փրկիչ եկեղեցու կալուածներին գոր-
ծի քննութիւնը (ուժ գիւղեր՝ 19 հազար դէ-
սիատին տարածութեամբ և 400 հազար բուրձի
արժողութեամբ): «Մշակի» ընթերցողներին
յայտնի է, որ համաձայն 1898 թ. մարտի 26-ի
Բարձրագոյն հրամանի՝ ուսումնարանական շըր-
ջանի հոգաբարձուս գրաւել էր յիշեալ կա-
լուածները, վարչական կարգով, իբրև սեփա-
կանութիւն եկեղեցական ծխական դպրոցների
Թիֆլիսի հայոց կոնսիստորիայի բողոքի վրա,
ձանաչել էր հայոց եկեղեցու սեփականութեան
իրաւունքը: Ուսումնարանական շըջանի հոգա-
բարձուն, անբաւական մնալով այդ վճռից,
գործը անց կացրեց դատաստանական պալատը,
ուր և պիտի քննվի ամսիս 24-ին:

Չորեքշաբթի, մարտի 19-ին, ժողովրդական
լուսաւորութեան միջնորդութեան խորհրդի
անդամ իշխան Գոյիցին այցելեց քաղաքային
տարրական դպրոցներն և մանրամասնաբար
ծանօթացաւ Միքայէլեան արհեստաւորաց ու-
սումնարանի ներկայ դրութեան հետ: Նոյն օրը
իշխան Գոյիցին, Անդրկովկասեան երկաթուղու
երեկոյան գնացքով, ուղևորվեց Բաքու, որտեղ
կարճ ժամանակ մնալուց յետոյ՝ կը շարունակէ
ճանապարհը դէպի Պետերբուրգ:

Վերջին չորս-հինգ օրվայ ընթացքում եղա-
նակ Թիֆլիսի շրջակայքում շատ տաքացաւ:
Կարայիւզի, Սօղանլուխի, Շաղալույի արօ-
տատեղերը սկսեցին կանաչով ծածկվել: Բայց
կղած ցրտերի չորսիւս փչացել են գառներ
մեծ քանակութեամբ, ուստի ենթադրում են,
որ առաջիկայ Ջատիկին գառները թանգ կը
լինեն:

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են,
որ կանանց գիւղատնտեսական ընկերութիւ-
նը միջնորդութիւն է յարուցել, որով թոյլ-
աւուրիւն է խնդրում հիմնելու գիւղա-

չը կենայի, մեր կարաւանը հիմայ կորած կըլ-
լար: Չէք յիշի, որ մեր երանելի Մեծն Ներ-
սէսը պատերազմի առեւն աղօթքի դիմելով
հակառակ բանակը կործանեց:

—Յիշում եմ, ասաց Բաճիկին, բայց այդ
անելու համար Մեծն Ներսէսներ պէտք են,
և ես զարմանում եմ, որ դուք ձեզ համեմա-
տում էք այդ անուղւղական և սուրբ մարդի
հետ: Բացի այդ՝ համաճամայններն այժմ այլ
կերպարանք են օտացել: Ասորոց պատրիարք
Մար Շմուն դէնք է կրում իր վրա և իր գի-
նակի—հրացանակիրներով ընկնում է քուր-
դերի ետեւից և հալածում է նրանց:

Այս խօսքերից յետոյ Բաճիկին ինձ ասաց,
թէ չարժէ այլ ևս այդ մարդի հետ երկար և ու-
բարակ խօսել, զնանք դէպի կորաւանը: Ես
արդէն սկսել էր շարժվել և մեզ էր օպատու-
Միւրան աղան էլ եկաւ նստեց իր ձին, բայց
այնուհետև նա գալիս էր կարաւանի ետեւից
կորագլուխ Մեք գնում էինք ճանապարհի
ուղղութեամբ և խօսելով:

—Դուք այդ մարդուն առեւծի նմանեցրեք
այսօր, բայց տեսա՛ք, որ նա կատու էլ դուք
չեկաւ, ասաց ինձ ժպտալով Բաճիկին. այդպէս
են լինում միշտ պոռոտախօսները:

Արդէն խաւարը տիրապետել էր լեռ ու ձոր՝
մենք մի ժամից յետոյ իջանեցինք և երկրորդ
օրը Ուրմուռն էինք:

(Կը շարունակվի)

Директор института Гам. Изд. Т. 20. В. Ветеринар. 20